Շրջակա միջավայրի նախարար

պարոն Հակոբ Սիմիդյանին

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1.Գործուղվող անձի անունը, ազգանունը**

Գայանե Գաբրիելյան

**2.Զբաղեցրած պաշտոնը**

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

**3.Գործուղման վայրը և ժամկետը**

Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)

2023 թվականի հունիսի 27-ից 28-ը

**4. Հրավիրող կողմը**

Եվրոպական միության արտաքին գործողությունների եվրոպական ծառայության (ԱԳԵԾ)

**5. Գործուղման նպատակը**

Մասնակցություն Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն (ՀՀ-ԵՄ) գործընկերության կոմիտեի չորրորդ նիստին

**6. Քննարկված թեմաները (հարցերը)**

Հանդիպման ժամանակ քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ճանապարհային քարտեզի դրույթների իրականացման ընթացքը,
- մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը, էներգետիկան, տրանսպորտը և փոխկապակցվածությունը,
- շրջակա միջավայրը,
- կլիմայական փոփոխությունները և քաղաքացիական պաշտպանությունը,
- մաքսային ոլորտը և դիմակայուն տնտեսությունը, կրթության, երիտասարդության, մշակույթի ոլորտներում համագործակցությունը,
- աշխատանքի և սոցիալական հարցերի վերաբերյալ տարվող քաղաքականությունը,
- արտաքին գործերի և անվտանգության քաղաքականությունը,
- Արևելյան գործընկերության շրջանակներում համագործակցությունը:

**7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցերը**

Նիստն անցկացվել է հայկական կողմից ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանի և ԵՄ արտաքին գործողությունների եվրոպական ծառայության՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով կառավարող տնօրենի տեղակալ Լյուկ Դևինի (Luc DEVIGNE) համանախագահությամբ:

Եվրոպական կողմին ներկայացվել է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (ՀԸԳՀ) շրջանակներում իրականացված աշխատանքների կատարողականը, ներառյալ շրջակա միջավայրի ՀԸԳՀ «Շրջակա միջավայր» բաժնով նախատեսված ավելի քան 100 միջոցառումները, որոնք ուղղված են ԵՄ երկու տասնյակից ավել հրահանգներին համապատասխան ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին, որոնց նպատակն է ապահովել առաջընթաց շրջակա

միջավայրի կառավարման ոլորտում, մասնավորապես շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, բնապահպանական ռազմավարական գնահատման, բնապահպանական կրթության, բնապահպանական պատասխանատվության, միջսահմանային համագործակցության և բնապահպանական տեղեկատվության հանրության հասանելիության ոլորտներում:

Հանդիպման ժամանակ ներկայացվել է հաշվետու ժամանակահատվածում (2022 - 2023թթ.) շրջակա միջավայրի նախարարության մի շարք աշխատանքները՝ ջրային ռեսուրսների կառավարման, կենսաբազմազանության պահպանման, թափոնների կառավարման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և օդի որակի ոլորտում:

2020-2022 թվականներին շրջակա միջավայրի նախարարությունը նախաձեռնել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքի մշակումը՝ հիմնված ԵՄ համապատասխան դիրեկտիվների պահանջների, ինչպես նաև Օրհուսի և Էսպոի կոնվենցիաներով սահմանված պարտավորությունների վրա: Օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2023 թվականի մայիսի 3-ին: Օրենքի հիման վրա առաջիկա երկու տարիների ընթացքում նախատեսվում է մշակել 9 ենթաօրենսդրական ակտ:

Ներկայացվել են հաշվետու ժամանակահատվածում իրականացված մի շարք իրավական բարեփոխումներ ջրային ռեսուրսների կառավարում և ջրի որակի վերաբերյալ, մասնավորապես.

- 2022 թվականի հուլիսի 7-ին Ազգային ժողովն ընդունել է Ջրային օրենսգրքում փոփոխությունների փաթեթը: Փոփոխությունները ներառում են Եվրոպական միության Ջրի շրջանակային հրահանգի հիմնական սկզբունքները:

- Կառավարության «Գետի ինքնամաքրման հզորության գնահատման մեթոդը սահմանելու մասին» որոշումը ընդունվել է 2022 թվականի նոյեմբերին:

• Ջրային հատվածի հարմարվողականության պլանը և դրա 2022-2026 թվականների միջոցառումների ծրագիրը ընդունվել են 2022 թվականի նոյեմբերին:

• Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1912-Н և N1909-Н որոշումներով հաստատվել են Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2022 թվականի դեկտեմբերի 12-ին: Օրենքի ընդունումը կնպաստի մթնոլորտային օդի պահպանության կառավարման և միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարմանը: Ներկայացվել են նաև օդի որակի մոնիտորինգի, օդի աղտոտվածության կանխարգելման և վերահսկման միջոցառումների հետ կապված իրականացված մի շարք ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ: Մեկնարկում է ենթաօրենսդրական ակտերի մշակումը՝ նոր օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով:

Ներկայացվել է «Աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագիծը, որը շրջանառվել է շահագրգիռ կառույցների շրջանում և ներկայացվել վարչապետի աշխատակազմ: Այժմ նախագիծն ակտիվ քննարկումների փուլում է:

Տեղեկացվել է «Քիմիական նյութերի մասին» օրենքի մշակման մեկնարկի մասին, Ձևավորվել է օրենքի նախագծի թիմը և ձևակերպվել է օրենքի կառուցվածքը, բանակցություններ են ընթանում միջազգային գործընկերների հետ՝ տեխնիկական և փորձագիտական աջակցություն ստանալու համար:

2022 թվականի մարտին Ազգային ժողովն ընդունել է «Կենդանական աշխարհի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը՝ Հայաստանի

Հանրապետությունում վարչական գործընթացների կրճատմանը և վայրի բնության օգտագործման համապարփակ կարգավորմանը նպատելու նպատակով:

Ներկայացվել են EU4Climate նախագծի շրջանակներում մշակված «Կլիմայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգը, որի նպատակն է ամրագրել կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության քաղաքականության մշակման և իրականացման իրավական կարգավորման մոտեցումները (կլիմայի քաղաքականություն): Այն կօգտագործվի 2023 թվականի հոկտեմբերին «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի մշակման համար: Մշակվել է նաև Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումների զարգացման երկարաժամկետ (մինչև 2050թ.) ռազմավարությունը, որը պատրաստ է կառավարություն ներկայացվելու համար:

Ներկայացվել են նաև «Հայաստանում հարմարվողականության միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումն առաջ մղելու հարմարվողականության ազգային ծրագրի» շրջանակներում մշակված ՄԱԶԾ-GCF ծրագրերը.

- Ոլորտային հարմարվողականության պլաններ և գործողությունների ծրագրերը,
- Գյուղատնտեսության ոլորտի հարմարվողականության հայեցակարգը և 2022-2026 թթ. գործողությունների ծրագիրը,
- Առողջապահության ոլորտի հարմարվողականության պլան և 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը,
- Էներգետիկայի ոլորտի հարմարվողականության պլանը և 2023-2027 թթ. գործողությունների ծրագիրը,
- Ջրաշրջության ոլորտի հարմարվողականության պլան և 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը,
- Շիրակի և Տավուշի մարզ /մարզի հարմարվողականության պլաններ,
- Բնակավայրեր (ներկայումս մշակման փուլում է գտնվում Երևան քաղաքի հարմարվողականության ծրագիրը):

Ներկայացվել են Հայաստանում Հայաստանի չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ /MRV) համակարգի ստեղծման գործընթացի շրջանակներում մշակված նախագծերը.

- «Կլիմայի ֆինանսավորման վերաբերյալ տվյալների և տեղեկատվության հավաքագրման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը:
- «Ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը:
- Շրջակա միջավայրի նախարարի «Կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության միջոցառումների դասակարգման ուղեցույցը հաստատելու մասին» հրամանի նախագիծը:

Հայաստանի Հանրապետության անտառային քաղաքականության, ռազմավարության և ազգային գործողությունների ծրագրի մշակումն ավարտական փուլում է: Կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 610-L որոշմամբ Հայաստանը պարտավորություն է ստանձնել մինչև 2030 թվականը երկրի անտառածածկույթը հասցնել 12.9%-ի: Առաջարկվում է իրականացնել անտառային ոլորտում ԱԴԿ-ի կարիքների ամբողջական գնահատում և խոչընդոտների վերլուծություն:

Անդրադարձ է կատարվել «Օզոնային շերտի պաշտպանության մասին» օրենքում վերահսկվող նյութերի ցանկի փոփոխությանը, որում ներառվել է նյութերի նոր կատեգորիա՝ հիդրոֆտորածխածինները (HFCs): 2021 թվականին Հայաստանում ներդրվել է HFC լիցենզավորման համակարգը՝ երկրի ներսում ածխաջրածինների (HFC) առևտուրը կարգավորելու համար: Լիցենզավորման համակարգի միջոցով կառավարությունը կապահովի ODS-ների և HFC-ների ներմուծման և արտահանման պատշաճ վերահսկողություն և մոնիտորինգ՝ համապատասխան կանոնակարգերի և միջազգային պայմանագրերի համաձայն: Ներկայումս ՀՀ կառավարությունում քննարկվում է նոր

օրինագիծ, որի առաջնային նպատակն է փոփոխություններ մտցնել գործող օրենքում՝ ներառելով կարևորագույն դրույթներ՝ կարգավորող դաշտը բարելավելու համար:

Իրականացվել է «Հայաստանում կենսաբազմազանության ուժեղացված պաշտպանությունը և կայուն օգտագործումը եվրոպական չափանիշներին համապատասխան» երկամյա թվինինգ ծրագիրը՝ ապահովելու և ընդլայնելու ԵՄ-ի հետ շարունակական համագործակցությունը՝ CEPA-ին համապատասխան բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցման միջոցով և շարունակել TAIEX և Twinning տեխնիկական աջակցության ծրագրերի իրականացումը ԵՄ անդամ պետությունների հետ:

**8.Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Կոմիտեի նիստերում քննարկվել են շրջակա միջավայրի ոլորտում ՀՀ-ԵՄ համագործակցության բովանդակալի օրակարգին առնչվող հարցերը, ներկայացվել է զեկույց ընթացիկ իրավիճակի, զարգացումների, հեռանկարային ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև ԵՄ-ից ակնկալվող աջակցության և հետագա քայլերի մասին:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Մասնակիցները հայտնել են ակնկալիքներ սեպտեմբերին բոլոր հարցերը ավելի բովանդակային քննարկելու վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ ենթակոմիտեները տեղի չեն ունեցել և բարձրաձայնված յուրաքանչյուր հարցի շուրջ եղել է լրացուցիչ մանրամասների անհրաժեշտություն:

Համաձայն ձեռք բերված պայմանավորվածության, համապատասխան տեղեկատվությունը մշակվում է՝ գրավոր ներկայացնելու նպատակով:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝

Գայանե Գաբրիելյան

11.07.2023թ.